ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/9039/02/24

# ՈՐՈՇՈՒՄ

## Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

31 հոկտեմբերի 2024թ                                                                 ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/16-2-15» պայմանագրի 26.09.2024թ. միակողմանի լուծումը և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.10.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

## ՊԱՐԶԵՑԻ

«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. հոկտեմբերի 25-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/16-2-15» պայմանագրի 26.09.2024թ. միակողմանի լուծումը և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.10.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. հոկտեմբերի 28-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. հոկտեմբերի 29-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127

հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/16-2-15» պայմանագրի 26.09.2024թ. միակողմանի լուծումը և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.10.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/9039/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. դեկտեմբերի 6-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան**

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2024.10.31 14:41:46 AMT

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*